ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մտահոգված եք, որ ձեզ մտերիմ որևէ մեկը կարող է կիրառել հրազեն՝ ինքն իրեն կամ այլոց վնասելու նպատակով, ապա կկարողանաք դիմել հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքի համար, որպեսզի հնարավորություն տաք այդ անձանց օգտվել անվտանգ աջակցությունից և կանխել հրազենի կիրառումը և դրանով ինքնասպանություն գործելը:

Կարող եք օգտվել քայլ առ քայլ նկարագրվող ուղեցույցից և գտնել բոլոր պահանջվող փաստաթղթերը, որպեսզի դիմեք հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքի համար առցանց ձևով՝ **gunsafety.ca.gov** կամ ձեր տեղական Գերագույն դատարան:

Ի՞ՆՉ Է ԻՐԵՆԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔԸ՞

- Հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքը **տեղական դատարանի կողմից կիրառվող ժամանակավոր գործողություն է**, երբ որևէ մեկն ինքն իրեն կամ այլոց վնասելու ռիսկի տակ է գտնվում:
- Արգելքը ստացող ճգնաժամում գտնվող որևէ մեկը **չի կարող գնել կամ տիրապետել հրազեն կամ զենք**, քանի դեռ արգելքը գործում է:
- Այս ժամանակավոր արգելքները **հնարավորություն են տալիս կալիֆոռնիացիներին միջամտել, պաշտպանել ճգնաժամում հայտնված անհատների իրավունքները** և ըստ օրենքի չեն համարվում պատիժ:

ԻՆՉՊԵՍ Է ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆ ԱՆՎՏԱՆԳ ՊԱՀՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ՞

- Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կալիֆոռնիայում հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքներն **օգնել են կանխել 58 սպառնացող զանգվածային կրակոցներ** այն ուժի մեջ դնելուց սկսած առաջին երեք տարում:
- Հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքներն օգնում են կանխել հրազենի կիրառմամբ ինքնասպանությունները, որոնք նահանգի հրազենային մահերի կեսն են ներկայացնում: Տվյալները փաստում են, որ նմանատիպ օրենքի կիրարկումն օգնել է ապահովել **14 տոկոս նվազեցում** Կոնեկտիկուտի հրազենային ինքնասպանությունների մակարդակում:

ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԿԱԼԻՖՈՌՆԻԱՅՈՒՄ ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ՞

Հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական ժամանակավոր արգելքի համար դիմելն անվճար է: Իրավասու խնդրարկուները ներառում են.

- Ընտանիքի անդամ և սիրելի անձնավորություն՝ ըստ արյունակցական կապի, ամուսնության կամ որդեգրման:
- Ընտանիքի և նույն սենյակում ապրող ներկայիս կամ նախկինում ապրած անձ:
- Գործընկեր, ով կանոնավոր փոխազդեցություն է ունեցել ճգնաժամում հայտված անձի հետ առնվազն մեկ տարի ժամկետով՝ ունենալով գործատուի հավանությունը:
- Միջին դպրոցի, ավագ դպրոցի, քոլեջի կամ համալսարանի ուսուցիչ կամ աշխատող, որտեղ ճգնաժամում հայտնված անձը հաճախել է վերջին վեց ամիսներին՝ դպրոցի վարիչի կամ ղեկավարի թույլտվությամբ:
- Իրավապահ մարմիններ, այդ թվում Կալիֆոռնիայի խաղաղապահները:
- Անհատ, ով ընդհանուր երեխա ունի կամ ժամադրվում է ճգնաժամում հայտնված անձի հետ:

ԵԹԵ ԴՈՒՔ ԿԱՄ ՁԵՐ ՍԻՐԵԼԻՆ ԳՏՆՎՈՒՄ ԵՔ ԽԻՍՏ ՃԳՆԱԺԱՄՈՒՄ և ԻՆՔՆԵՐԴ ՁԵԶ ԿԱՄ ԱՅԼՈՑ ՎՆԱՍԵԼՈՒ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՎՏԱՆԳԻ ՏԱԿ, ԱՊԱ ԶԱՆԳԱՀԱՐԵՔ 911: